

ձրանան, հովէն շարժած շողողուն դրասանցներու ձեռվ:

(Երբեմն երկնքին բարձր կողմերուն վըրայ կը ձեանան պսակի ձեռվ, շատ վառվուն դոյներով, չորս դին ճառագայթներ արձշկելով:)

179 Ի՞նչ է հիւսիսայգին պատճառը: — Ելեքտրականութեան անցնիլն մինոլորտին վերի մասերէն:

180 Արդեօք ուրիշ պատճառ ալ կայ: — Ոմանք կը համարին թէ դիւրավառ կազերու բորբոքումն ըլլայ, որք իրենց թեթեռութեան պատճառաւ մինոլորտին բարձրագոյն կողմերը կ'ելլեն:

181 Բորբոքումը ինչէն կը պատճառի: — Ելեքտրական կայծէն:

182 Որո՞նք են այն կազերն որ կը հաւաքուին օդուն բարձրագոյն կողմերը: — Զրածին կազն, և ուրիշ շատ իրեն բաղկացուցիչ կազային նիւթեր:

183 Ուստի կը ծագին հիւսիսայգին զանազան գոյները: — Մինոլորտին խաւերուն զանազան խտութենէն, որոնց մէջէն կ'անցնի լոյսը մեզի հասնելու համար: Ամենէն բարակ օդը՝ ճերմակ լոյս մը կը պատճառէ. չորագոյն օդը՝ կարմիր լոյս, իսկ խոնաւ օդը՝ դեղին երիզներ:

184 Հիւսիսայգը ձայն ալ կը պատճառէն: — Միշտ չէ, բայց երբեմն կը լսուին ձայներ նման սովորու, կամ խոխովնան, կամ անձրեփ, կամ ծանրութեան մը տակ ջախճախուած փայտի:

185 Ինչո՞ւ համար ոմանք հիւսիսայգին այծ կաքառող կ'ըսեն: — Իր ճառագայթներուն ալէծ ծածանմանը համար:

186 Ինչէն կ'իմացուի որ հիւսիսային արշալոյսները ելեքտրականութենէ առաջ կու գան: — Անկէց որ ազդեցութիւն մը կ'ընեն մագնիսական սասեղին վրայ, և կը խոտորեցընեն իր սովորական ուղղութենէն:

187 Ի՞նչպէս կը կոչուին այն պղտի բոցերն որ երբեմն կպած կ'երեւան նաւերու կայմերուն: — Սովորաբար կ'ըսուին լուրբ նիկողայոսի, կամ Սուրբ Հեղինեայ և կամ Սուրբ Ելմոսի հուր:

(Երբոր միայն մէկ բոց մ'երեւայ կայմին ծայրը՝ կը նշանակէ նաւաստեաց թէ մրրիկը դեռ պիտի սաստկանայ. եթէ երկուք երկի կը նշանակէ թէ մրրիկն անցնելու վըրայ է: )

188 Այսպիսի բոցեր երկրիս վրայ ալ կ'երեամն ինչպէս որ ջուրի վրայ:

— Այո՛, շատ անգամ կը տեսնուին բարձր և սրածայր մետաղեայ մարմնոց ծայրը, ինչպէս զօրաց նիզակներուն վրայ, և ինչուան գլխարկներու և մազերու ծայր ալ:

189 Ի՞նչ է պատճառը այս բոցերուն: — Ելեքտրականութիւնը, զոր գետինն և ծովն կը հանեն մինչև յամպերը՝ անելեքտրական մարմնոց ծեռքով, ինչպէս են նաւերուն կայմերը և զօրաց նիզակները:

190 Ի՞նչ կ'իմացուի անելեքտրական մարմին ըսելով: — Այս մարմինները որ գժուարութեամբ կ'ելեքտրականան, որով չեն ալ պահեր ելեքտրականութիւնը՝ այլ շուտով կը ցրուեն:

191 Ո՞ր եղանակի մէջ աւելի յաճախ կը տեսնուին այս կրակները:

— Երբոր արեւուն տաքութիւնը աւելի շուտով ջուրը շոգի գարձընէ, վասն զի այն ատեն աւելի շատ ելեքտրականութիւն կը շարժի և կը տարածուի օդուն մէջ նաւուն առագաստակալներուն կամ ուրիշ հաղորդիչներու ծեռքով:

Կը շարունակուի:

### ՀԵՏԱՔՐԹՐԱԿԱՆՆՔ

Հաւկընի պահպանաբնաւթիւն. — Ամառուան տաքութեան ատեն ալ հաւկիթները կրնան պահուելեր կար ատեն, եթէ օդուն գաչելէն ազատ ըլլան: Այս բանիս համար երբեմն գեղերու մէջ ծածկեալ տակառի մը մէջ կարգ կարգ կը շարեն հաւկիթները մոփրի վրայ, զգուշանալով որ իրարու շպաշնի:

Աւելի աղէկ կը պահուին եթէ թուղթերու մէջ պլոււին հաւկիթները և ծածկուին վարսակի մանր յարգով կամ աղէկ չոր աւազով:

Այս երկու կերպն ալ աղէկ է, բայց լսագոյնն է եռացեալ ջուրի մէջ ընկղմելը: Ճուրը սանի մը մէջ եռացընելէն ետեւ հաւկիթները տասասասուերկու հատ մէկտեղ պարզուտի մէջ կը դընեն ու կ'ընկղմեն սանին մէջ, և վայրկենէ մը վերջը կը հանեն: Այս կերպով հաւկըթին մէջի կողմը բարակ կեղեւ մը կը թանձրանայ և կը ձեւացընէ ներքեւ տեսակ մը ծեփի՝ որ գէմ կը գնէ հաւկը. Թին գոյացութեանը գոլորշանալուն, և հետեւ բար օդուն շշափմանը՝ որ պիտի թափանցէր կեղեկն անոր ներքեւ շոգիացման պատճառաւ թողած դատարկութիւնը լեցընելու համար: